343

1. Խոսքերդ վառ լույս են իմ ճամփին,
Ամեն օր կնորոգեն իմ հոգին,
Դեղ են թանկ, որ պետք են աչքերիս,
Ճերմակ հանդերձ, որ ծածկույթ է մեղքերիս:

Սուրբ Հոգի ազատության,
Կառաջնորդես դեպի նոր կյանք սրբության:
Սուրբ Հոգի ուրախության,
Կառաջնորդես դեպի նոր կյանք սրբության:

2. Բարի՛ Հովիվ, իմ սրբությո՛ւն, իմ փրկությո՛ւն,
Ջրի վտակ՝ չորացած իմ կյանքում,
Ծաղկեցնող՝ ամայի սիրտը իմ,
Կսիրես ինձ, կներես, Փրկի՛չ անգին:

3. Ոտքերիդ տակ դնեմ կյանքը իմ,
Մաքրի՛ր ինձ աղտերից հանց ոսկին,
Երբ անցնեմ կրակով հալոցքի,
Կաղաչեմ Քեզ, առաջնորդի՛ր, Սո՛ւրբ Հոգի: